



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԴԻՄԱՒՈՐՈՒՄ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌԻՆ

**«ՅՈԳԵՒՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ,  
ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԾԱՂԿՈՒՄ ԵՒ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՀԶՕՐԱՑՈՒՄ,  
ՊԵՏՔ Է ԿԱԶՄԵՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ»**

ՊԱՏԳԱՄԵՑ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցին եղաւ Վեհափառ Հայրապետին ու իր բանաւոր հօտին միջեւ հանդիպումի առաջին ժամադրավայրը:

Հինգշաբթի 6 Հոկտեմբեր 2011-ի երեկոյեան, հայոց հայրապետը դիմաւորուեցաւ համախմբուած բազմահարիւր հայորդիներու կողմէ, առաջնորդութեամբ կրօնական ու ազգային մարմիններու ներկայացուցիչներուն: Հ.Ս.Ը.Մ.ի շեփորախումբը հնչեցուց ազգային երգերու երաժշտութիւնը, իսկ Հ.Ս.Ը.Մ.ական սկաւառներ պատուի կանգնած էին ու կը հսկէին կարգապահութեան:

Վեհափառ Հայրապետը ամպիովանիի տակ եւ իր շքախումբին ընկերակցութեամբ Ս. Կարապետ Մայր Եկեղեցի մուտք գործեց «Հրաշափառ»ով:

Շքախումբին մաս կը կազմէին Առաջնորդ Սրբազանը՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զոլոյեան:

Դիմաւորութեան ներկայ էին Ս. Աթոռոյս երեց միաբան՝ Գերշ. Եփրեմ Արք. Թապաքեան, Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեան, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Եուճին Արք. Քափլան, Լոս Անճելոսի Կաթողիկ եկեղեցւոյ Էքիմէնիք գրասենեակի վարիչ՝ Հայր Ալեքսիս, ներկայացուցիչը Կոմէզ Արքեպիսկոպոսին, Միաբան Հայրեր ու քահանայ հայրեր, Հայ Կաթողիկէ Ժողովրդապետ՝ Հոգշ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Լիբանանի գլխաւոր հիւպատոս Տիկ. Մատոնա Աուն Ղազալ, Ազգային Կեդրոնական Վարչութեան եւ Ազգային Վարչութեան անդամներ, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ու

միութենական ներկայացուցիչներ, բարերարներ, եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն:

Կանոնական աղօթքէն ետք, հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կոստական ժողովին, Ազգային Վարչութեան, ազգային բոլոր մարմիններուն ու ներկաներուն անունով որդիական սիրով ողջունեց Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութիւնը թեմին:

Ան ըսաւ, որ թեմին համար հոգեւոր մեծ խանդավառութիւն է ընդունիլ իր Հայրապետը, որ կուգայ վերանորոգելու մեր քրիստոնէական հաւատքը ու ամրացնելու մեր ազգային պատկանելիութիւնը՝ նոր շունչ ու կենսունակութիւն տալով մեր գաղութին:

Առաջնորդ Սրբազանը նաեւ յիշեցուց մեր ժողովուրդի գաւազաններուն, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր Վեհափառին աշխոյժ գործունէութեամբ, ներքին թէ արտաքին ճակատներու վրայ, այսօր տիրական ներկայութիւն է թէ՛ մեր ժողովուրդի կեանքէն ներս եւ թէ միջ-եկեղեցական եւ միջ-կօսական յարաբերութեանց ծիրէն ներս:

Հայ Մանուկի Տարուան առիթով, Վեհափառ Հայրապետին մանուկի քաղցրութեամբ իր դասընկերներուն եւ բոլոր հայ մանուկներուն անունով բարի գալուստի խօսք արտասանեց նաեւ Ազգ. Ռոգ եւ Ալէք Վարժարանի աշակերտուհի Մերի Մանոսեան, եւ արժանացաւ Վեհափառ Հայրապետի առաջին օրհնութեան:

Ապա Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց Վեհափառ Հայրապետը, որ ներկայ ժողովուրդին ուղղէ իր անդրանիկ պատգամը:

Վեհափառ Հայրապետը ողջունելով Առաջնորդ Սրբազանը, գնահատեց իր նուիրեալ ծառայութիւնը մեր թեմին: Ան նաեւ իր հայրական գնահատանքը յայտնեց ազգային իշխանութեան եւ բոլոր մարմիններուն, որոնք Առաջնորդ Սրբազանին հետ միասին կը ծառայեն մեր թեմի ժողովուրդի գաւազաններուն: Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ իր հովուապետական այցելութիւնը ողջունելու եկած մեր ժողովուրդի մեծ թիւով գաւազաններու ներկայութեան Վեհափառ Հայրապետը իր անհուն ուրախութիւնը յայտնեց եւ ապա ըսաւ. «Եկեղեցին, ինչպէս միշտ կը շեշտենք, ժողովուրդն է:

Հետեւաբար, եկեղեցւոյ սպասաւոր ըլլալ կը նշանակէ ժողովուրդին հովիւը ըլլալ՝ եկեղեցին իր հաւատքով ու ճշմարտութիւններով տանելով մեր ժողովուրդին, եկեղեցին որպէս ծառայութիւն գործնապէս թարգմանելով ժողովուրդի կեանքին մէջ: Այսպէ՛ս եղած է մեր եկեղեցին ու այսօր նո՛յն ինքնաճանաչումով ան կոչուած է ինքզինք արժեւորել ու իրագործել մեր ժողովուրդի կեանքէն ներս՝ Աստուածաշունչի ուսուցումներուն անվեհեր քարոզիչը դառնալով, մեր ազգին աւանդութիւններուն պահապանը ու ձգտումներուն ջատագովը դառնալով»:

Ապա Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ հետեւեալ երեք բնագաւառները պէտք է դառնան առաջնահերթութիւնները մեր կեանքին.-

Ա.– *Յոգեւոր կեանքի վերանորոգում:* Վեհափառ Հայրապետը յիշեցուց, թէ «Յոգեւոր կեանքը լոկ Աստուածաշունչի ընթերցում չէ, եկեղեցւոյ պատմութեան ու աւանդութեան մասին տեղեկութիւններ ունենալ չէ, այլ՝ մասնակցութիւն է մեր եկեղեցւոյ համայնական կեանքին ու

հաւատքի առաքելութեան: Հոգեւոր կեանքը մտածելակերպի, կենցաղակերպի ու գործելակերպի այնպիսի որակ է, ուր կը ճառագայթեն Աստուծոյ Որդւոյն աշխարհի բերած ճշմարտութիւնները: Հոգեւոր կեանքը ընկերութենէն հեռու, ինքնակեդրոն ու ինքնանպատակ կեանքի վիճակ մը չէ, այլ յանձնառու պայքար է չարին ու մեղքին դէմ, անանձնական ծառայութիւն է աղքատին ու հիւանդին: Հոգեւոր կեանքը քրիստոսակեդրոն կեանք է»: Վեհափառ Հայրապետը շեշտեց, թէ «Առանց հոգեւոր արժեքներու, մեր կեանքը պիտի դատարկուի իր որակէն ու իմաստէն: Առանց հոգեւոր արժեքներու, մեր կեանքի ճանապարհը պիտի լեցուի մեղքով ու չարիքով: Առանց հոգեւոր արժեքներու, մեր կեանքը պիտի կորսնցնէ իր աստուածատիպ պատկերը ու ճշմարիտ նպատակը: Արդ, հոգեւոր կեանքի վերանորոգումը հրամայական անհրաժեշտութիւն է: Հոգեւոր կեանքի վերանորոգումը վերադարձ է մեր եկեղեցւոյ արժեքներուն ու աւանդութիւններուն, մեր հարազատ արմատներուն: Հոգեւոր կեանքի վերանորոգումը դաւանիլ ու ընդունիլ է Քրիստոս մեր ճշմարիտ լոյսը կեանքի խաւարին դիմաց եւ մեր փրկութեան լաստը կեանքի փոթորիկներուն մէջ»:

Բ.– *Հայ դպրոցի վերածաղկում:* Վեհափառը շեշտեց, թէ հայ դպրոցը «մեզի համար սովորական ուսումնարան մը չէ. այլ՝ հայ մարդուն հոգին, միտքը ու սիրտը կրթող, նկարագիրը կազմաւորող, անոր կեանքի ճշմարիտ ճամբան ցոյց տուող, անոր ազգային ինքնագիտակցութիւնը բիրեղացնող սրբազան առաքելութիւն է: Հետեւաբար, պատահական երեւոյթ չէ եկեղեցւոյ կողքին հայ դպրոցին ներկայութիւնը. պատահական չէ որ հայ եկեղեցին հայ դպրոցը կը նկատէ իր առաքելութեան անբաժան ու անբաժանելի մասը. դարձեալ պատահական չէ, որ մեր ժողովուրդը, ինչպէս եկեղեցւոյ նոյնպէս հայ դպրոցին կը մօտենայ բարձրագոյն աստիճանի երկիւղածութեամբ ու նախանձախնդրութեամբ»: Վեհափառ Հայրապետը յետոյ ըսաւ. «Խորապէս հաւատալով հայ դպրոցին ճակատագրական դերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր մտահոգութեան մնայուն առարկան դարձուց հայ դպրոցը: Մեր Սուրբ Աթոռը իր թեմերու ճամբով դպրոցներ շինեց, ուսուցիչներ պատրաստեց, կրթական ծրագիրներ մշակեց, նիւթական աջակցութիւն ընծայեց որպէսզի հայ դպրոցը միշտ մնայ կենսունակ մարդակերտումի ու հայակերտումի իր առաքելութեամբ»: Ապա Վեհափառը կոչ ուղղելով ըսաւ. «Սրտագին կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն վերահաստատելու մեր ամբողջական զօրակցութիւնը հայ դպրոցին նկատմամբ: Հայրական կոչ կ'ուղղենք նաեւ մեր բոլոր ծնողներուն, իրենց զաւակները առաջնորդելու հայ դպրոց, ինչպէս նաեւ մեր բարերարներուն՝ վերանորոգ նուիրումով շարունակելու իրենց նպաստը հայ դպրոցին: Չմոռնանք երբեք որ առանց հայ դպրոցին, մեր ազգային արժեքներն ու աւանդութիւնները պիտի հեռանան մեր կեանքէն ու մեր ազգային ինքնութիւնը պիտի գունաթափի»:

Գ.– *Ազգային պահանջատիրութեան հզօրացում:* Խօսելով ազգային պահանջատիրութեան մասին, Արամ Ա. Կաթողիկոս յիշեցուց մեր ժողովուրդի զաւակներուն, թէ «Ազգային պահանջատիրութիւնը մեր ժողովուրդին համար ամենօրեայ պայքար է՝ ի խնդիր մեր բռնաբարուած իրաւունքներու վերատիրացման: Այս երկրագունդին վրայ արդէօք կա՞յ հայ

մը, որ չի գիտեր թե՛ 1915-Վին Օսմանեան թուրք կառավարութիւնը հայ ժողովուրդին դէմ ցեղասպանութիւն մը ծրագրեց ու գործադրեց: Կորսնցուցինք մէկուկէս միլիոն հայ, կորսնցուցինք հող ու ինչք, եւ մեր ժողովուրդի գաւակները աքսորուեցան իրենց պապենական հողերէն ու ցրուեցան աշխարհի բոլոր անկիւնները»: Ապա Վեհափառ Հայրապետը շեշտեց, թէ «Հայ ժողովուրդի պահանջատիրութեան գերագոյն իրաւատերը Հայաստանի պետութիւնն է: Արդ, մենք որպէս մէկ ազգ պիտի շարունակենք մեր պահանջատիրական պայքարը՝ ցեղասպանութեան 100-Վամեակի սեմին առաւել աշխուժացնելով զայն՝ ճանաչման կողքին նաեւ մեր իրաւունքներուն հատուցումը շեշտելով: Բնականաբար աշխարհաքաղաքական պայմանները փոխուած են. մեր մօտեցումները, մեթոտները ու աշխատանքի կերպերը եւս անհրաժեշտ է որ փոխուին: Սակայն բոլոր պայմաններու մէջ միասնական աշխատանքով ու վճռակամութեամբ պէտք է մեր պահանջատիրութիւնը արտայայտենք միջազգային բեմերու վրայ»:

Իր Հայրապետական պատգամի աւարտին, Վեհափառ Հայրապետը ողջունեց Հայաստանի Հանրապետութեան Վերանկախացման 20-ամեակը, ըսելով՝ «Այս առիթով մեր յատուկ ուրախութիւնը կը յայտնենք, ի տես մեր սիրելի հայրենիքին, Հայաստանին հզօրացման ու զարգացման: Պէտք է միշտ նեցուկ կանգնիլ Հայաստանի պետութիւնը ամրապնդող եւ Արցախի անկախութիւնը ամրացնող բոլոր ծրագիրներուն: Հայաստանի ու Արցախի հզօրացումը նաեւ Սփիւռքի հզօրացումն է, եւ՝ փոխադարձաբար: Ինչպէս Հայաստանի մէջ ըսինք, Արցախը ու Սփիւռքը Հայաստանի շարունակութիւնն է. մենք մէկ ազգ ենք, մէկ հայրենիքով, մէկ պահանջատիրութեամբ, մէկ հաւատքով, նաեւ մէկ անցեալով ու ապագայով: Այս խոր գիտակցութեամբ պէտք է ապրի, մտածէ ու գործէ իւրաքանչիւր հայ»:

Վեհափառի պատգամէն ետք, դպրաց դասը արարողութիւնը փակեց «Ի Վեհ Բարձանց» եւ «Կիլիկիա» մաղթերգներով ու ազգային հիմներգով: Այնուհետեւ, ներկաները Վեհափառին օրհնութիւնը ստացան աջահամբոյրով:

## **COMMUNITY WELCOMING OF HIS HOLINESS ARAM I AT ST. GARABED CHURCH IN HOLLYWOOD**

On the evening of Thursday, October 6, 2011, the community gathered at St. Garabed Church in Hollywood for the official welcoming of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, "Hrashapar" service and "Achahampouyr".

The streets were lined with a large crowd of parishioners and scouts as the arrival ceremony began with the Homenetmen scouts marching band playing national songs.

Accompanied by the singing of the "Hrashapar" hymn, His Holiness was escorted into the Church by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate,

and H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States. A capacity crowd was waiting inside to receive His Holiness.

Among the attendees were H.E. Archbishop Yeprem Tabakian, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.E. Archbishop Vatche Hovsepian, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, Prelate of the Syriac Orthodox Church, Rt. Rev. Alexei Smith representing H.E. Cardinal Jose Gomez, Prelacy Clergy, Very Rev. Fr. Krikor Chahinian, Rector of the Armenian Catholic Church, Armenian Consul General the Honorable Grigor Hovhannissian, Lebanese Acting Consul General the Honorable Madonna Aoun Ghazal, Central Executive and Executive Council members, representatives of sister organizations, and sponsors.

After a canonical prayer service, the Prelate welcomed His Holiness to the Western United States on his fourth Pontifical visit, stating that this is indeed a great honor and His Holiness will renew and breathe new life into our community. The Prelate also stated that by the meritorious and diligent leadership of His Holiness, the Great House of Cilicia is a strong presence not only in the lives of Armenians, but also in ecumenical and inter-religious arenas.

On behalf of Armenian children, Rose and Alex Pilibos School student Mary Manossian welcomed His Holiness and received his blessings.

The Prelate then invited His Holiness to deliver his first public message of this Pontifical visit.

His Holiness commended the Prelate, Councils, and all those who serve for the splendor of our Church and the Western Prelacy, and greeted the large crowd that had come to receive his paternal blessings and message saying, "As we have always said, the Church is the people. Therefore, being a servant of the Church means being a shepherd to the people, taking the Church to the people, being a preacher of the Bible and its teachings, and preserving and fostering our heritage".

His Holiness subsequently stressed the three main themes of his Pontifical visit, all of which must be the priority of the Church.

(1) Spiritual Renewal: "Spiritual life is not only reading the Bible and knowing Church history and traditions. It is active participation in the life of our Church and our faith mission. It is a life centered around the Truth of Christ, a struggle against sin, service to the needy. Spiritual life is a Christ centered life. Without morals and values, our lives would be filled with sin, our lives would lose purpose, therefore spiritual renewal is vital to our lives", stated His Holiness

(2) Further anchoring and continued progress of Armenian Schools: Speaking on Armenian School, His Holiness said, "The Armenian School is not just an institute of learning; it is the place where the souls, minds, and spirits of our youth are developed, where character is built, where students are taught the righteous path and national identity. The presence of Armenian Schools alongside our Churches is not a coincidence. The Armenian Church considers the Armenian Schools as an extension of its mission, and our people have the same respect and love for both the Church and School. The Armenian School

is a high priority for the Catholicosate of Cilicia. Through its Dioceses, the Catholicosate built schools, prepared educators, devised curricula, and offered financial support so that the Armenian Schools could fulfill their invaluable mission. I call on all our people to offer their full support and backing of our schools, I call on our parents to send their children to Armenian schools, and on our sponsors to contribute their part. Without Armenian schools, we will lose our national values and identity".

(3) Reasserting our spirit of national aspirations: "The Armenian Cause is a daily struggle. As one nation, we must not only continue our struggle rather reassert and reinvigorate our spirit of national aspirations especially now as we near the 100<sup>th</sup> anniversary of the Genocide. As the times change, so must our approach, and with united efforts our Cause must be known in the international arena", stated His Holiness.

At the conclusion of his Pontifical message, His Holiness saluted the 20<sup>th</sup> anniversary of the independence of Armenia and stressed that we must all stand behind our beloved homeland and contribute to our nation's progress for a strong Armenia and Artsakh is a strong Diaspora. "We are one people, one nation, one fatherland, one cause, one faith, with one past and one history."

The service concluded with the singing of the Pontifical and Cilician anthems, after which the faithful approached the Pontiff to receive his blessings.